ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 23.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/24

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից 13.02.2018թ. ներկայացված՝ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «ՀՀ ԳՆ-ՍԳ ԳՀԱՊՁԲ 2/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.02.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1.4.1, 1.9.1 կետերը փոփոխելու և 1-5-րդ, 7-20-րդ չափաբաժինների մասով «Հրաշք այգի» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջի մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2018/24 բողոքն առանց քննության թողնելու մասին «Հրաշք այգի» ՍՊԸ-ի 22.02.2018թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից 13.02.2018թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**